ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Արվեստի դերն ու նշանակությունը սովորողների, որպես ստեղծագործական բարելավման միջոց

Կատարող՝ Մարգարիտա Հայրապետյան

Դպրոց՝ Երևանի Արա Հարությունյանի անվ. հ.49 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ Երաժշտություն

Կազմակերպություն՝ Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց ՊՈԱԿ

Խմբի ղեկավար՝ Հռիփսիմե Խրիմյան

Ե ր և ա ն 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Նպատակը 3
Արդիականությունը 3
Արվեստի ծագումը 4
1.Նկարչություն՝ 4
2.Երաժշտություն՝ 5
3.Պար 5
4. Թատրոն՝ 5
5. Կինո՝ 6
Արվեստների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը 7
Երաժշտությունը և գրականությունը 9
Երաժշտությունը և պարարվեստը 11
Երաժշտությունը և կերպարվեստը 12
Երաժշտություն, կինո և թատրոն 13
Օգտագործված գրականություն և հղումներ: 14

Ներածություն

Կոմբինատորիկան դիսկրետ մաթեմատիկայի ամենահին ճյուղերից մեկն է, որը սկիզբ է առել 16-րդ դարից, երբ պատահական խաղերը առանցքային դեր խաղացին հասարակության կյանքում:

Նպատակը - Այս թեմայի ուսումնասիրության նպատակն է՝ ուսումնասիրել, հետազոտել, սովորել արվեստի նկատմամբ մտածողության ձևերը և դրանց փոխանցման, ուսուցանման մեթոդները: Պատասխանել հետևյալ հարցին. Ինչպե՞ս անել, որ սովորողները առաջադրված երաժշտությունը վերլուծեն, հեշտությամբ հաղթահարեն դժվարությունները և հաճույք ստանան հաղթահարման գործընթացում: Ինչպե՞ս կարող է վերլուծել և ստեղծագործել, որը կօգնի ճանաչել, համեմատել և վերլուծել միջնակարգ դպրոցում արվեստի թեման:

Արդիականությունը – Արվեստը միշտ արդիական է: Ժամանակակից մարդու համար կարևոր է ճաշակը, մտածողության նոր դրսևորումները, ստեղծագործելը, որն առաջացնում է սեր արվեստի նկատմամբ:

Արվեստի ծագումը

Արվեստը ծագել է դեռևս քարե դարում: Նախնադարյան արվեստը անմիջականորեն միահյուսվել է նյութական արտադրության, մարդկանց աշխատանքային գործունեության հետ, կազմել նրա շարունակությունը:Այն եղել է միահյուսված ձևով, միաժամանակ ընդգրկել արվեստի գրեթե բոլոր տեսակների տարրերը: Արվեստի ծաղկումը պայմանավորված է ֆեոդալիզմի և միջնադարյան աստվածաբանական աշխարհայացքի դեմ հասարակության առաջադեմ ուժերի պայաքարով, թեև դարաշրջանի բանաստեղծներն ու նկարիչներ օբյեկտիվ պատճառներով չէին կարող ազատվել այդ աշխարահայացքի կապանքներից:Արվեստը հասարակության և մշակույթի մեջ ստեղծագործության տեսության և ֆիզիկական արտահայտման ձև է: Հիմնական բաղադրիչները ներառում են գրականություն, այդ թվում պոեզիա, արձակ և դրամանկարչություն, լուսանկարչություն, կեռամիկա, քանդակագործություն, կատարողական արվեստ,որոնց թվում երաժշտություն, պար և թատրոն, ինչպես նաև և ճարտարապետական`շենքերի նախաձեռման և կառուցողական արվեստ: Ծառայել է արվեսը, որպես ակունք պատմության և մարդկային հարաբերությունների՝ շրջակա միջավայրի փոխանցման գործում: Արվեստ տերմինը ներառում է, բայց չի սահմանափակվում: Երաժշտություն (գործիքային և վոկալ), պար, դրամա, ժողովրդական արվեստ և այլն: Արվեստն ունի յոթ ճյուղ: Գրականություն, նկարչություն, քանդակագործություն և երաժշտության հիմնական չորս արվեստներն են, որոնցից երեքը անցյալ են, դրաման՝ գրականությունը ներկայացման միջոցով, պարը՝ շարժման միջոցով արտահայտված երաժշտություն, իսկ երգը՝ գրականություն և ձայն: Արվեստը հասարակության գիտակցության ձև է, մարդու ստեղծագործող աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ: Արտացոլում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների մջոցով: Իրականության գեղագիտական ճանաչումը, մարդու ստեղծագործումը իրացվում է արվեստի տարբեր տեսակների մջոցով:

1.Նկարչություն՝

Նկարչությունը պատկերներ ստեղծելու միջոց է, որի ընթացքում օգտագործվում է տարբեր գործիքներ և տեխնիկա: Այն նկարիչը, ով գերազանց է նկարում, կոչվում է

գեղարվեստական ճարտարագետ կամ գեղանկարիչ: Նկարչությունը կարող է օգտագործվել մշակույթի մեջ օգտագործվող արվեստի ստեղծման համար. Օրինակ՝ նկարազարդումներ և անիմացիա:

2.Երաժշտություն՝

Երաժշտությունը արվեստի ձև է, որի միջավայրը ձայնն ու լռությունն են, որը ձևավորվել է ժամանակի ընթացքում: Ընդհանուր տարրերն են՝ հնչյունը, ռիթմը, դինամիկան և տեմբրի հնչյունային հատկություններ: Երաժշտությունը կարելի է բաժանել ժանրերի և ենթաճյուղերի: Արվեստի մեջ երաժշտությունը կարող է դասակարգվել ,որպես կատարողական և լսողական արվեստ:

3.Պար՝

Պարի մեջ կարևորում ենք մարմնի նրբագեղ շարժումները, պլաստիկան: Պարը վերաբերվում է մարդկային շարժումները, որն օգտագործվում են որպես արտահայտման ձև: Մարդիկ պարում են սթրեսը թեթևացնելու համար:

4. Թատրոն՝

Թատրոնը կատարողական արվեստի ենթաճյուղ է, որը ներառում է խոսքը, ժեստը, երաժշտությունը, տեսարաններ և այլ կատարողական արվեստի մեկ կամ մի քանի տարրեր: Բացի ստանդարտ պատմողական երկխոսության ոճից: Թատրոնը ներկայացնում է այնպիսի ձևեր,ինչպիսիք են օպերա,բալետ, մնջախաղ: Թատրոնը հունարեն բառ է, նշանակում է ներկայացում



5. Կինո՝

Կինոն հունարեն ‹‹կինեմա›› բառից է, որը նշանակում է շարժում: Այն ‹‹շարժվող նկարների›› տեսալսողական արվեստ է,ստեղծվել է 19-րդ դարավերջին և ֆրանսիացի գյուտարարներ Լուի և Ժան Լյումիեր եղբայրների անվան հետ: Սկզբում կինոն եղել է ‹‹համր››՝ առանց ձայնի: Էկրանի վրա երևացել են միայն շարժվող պատկերներ, իսկ հետո դարձել է հնչյունային: Կինոյում ընդգրկվում է արվեստի մեծ ընտանիքի անդամներ՝ գրականություն, երաժշտություն, պարարվեստ, կերպարվեստ և թատրոն:

Արվեստների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը

Այս թեմայում նախ ուսուցիչն աշակերտներին ծանոթացնում է **արվեստ** հասկացությանը:

Արվեստը դիտվում է որպես հոգևոր մշակույթ, անձի ձևավորման ու զարգացման աշխարհը ճանաչելու, գեղեցիկը ըմբռնելու անգնահատելի միջոց: Ցույց են տրվում արվեստի կրթադաստիարակչական, իմացական, ճանաչողական, հաղորդակցական նշանակությունը, դերը սովորողների գեղագիտական ճաշակի զարգացման, գեղարվեստական արժեքները գնահատելու համար: Արվեստը մարդկային գործունեության հատուկ ձև է, որն իրականությունն արտացոլում է գիտակցության մեջ՝ գեղարվեստական պատկերների պատկերների տեսքով: Արվեսում ձևը բխում է բովանդակությունից: Օրինակ, որպեսզի կոմպոզիտորի մտահղացումը դառնա երաժշտություն, նա դիմում է երաժշտական ‹‹լեզվի›› արտահայտչամիջոցների՝ հնչյունների բարձրությանը, ռիթմին և այլն: Բանաստեղծը դիմում է խոսքին, ռիթմին, հնչերանգին, նկարիչը՝ գգծին, գույնին, պարողը՝ շարժումների պլաստիկային և այլն: Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի իր լեզուն:Պետք է իմանալ, որ արվեստի ստեղծագործության մեջ ոչ միայն իրականության գեղարվեստական պատկերումն է,այլ նաև հեղինակի վերաբերմունքն ու զգացմունքները:

Աշակերտներն ուսումնասիրում են երաժշտության փոխկապվածությունը գրականության,պարարվեսստի,կերպարվեստի, թատրոնի և կինոարվեստի հետ:Ցույց են տրվում արվեստների և կյանքի միջև կապերի ընդհանրությունները: Աշակերտներն իմանում են, որ երաժշտությունը արվեստների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում. ռիթմի շնորհիվ կարող է ոչ միայն շարժումային, այլ հուզական լիցք հաղորդել արվեստի մեկ այլ տեսակի հետ: Արվեստի յուրաքանչյուր տեսակ յուրովի է արտացոլում իրականությունը,նրանք մեկը մյուսին լրացնում ու հարստացնում են:

Արվեստների ընկալման հարցում կարևոր դեր ունեն լսողությունը և տեսողությունը:

Տեսողական տպավորությունները հիմնականում կապված տարածության, լսողականը՝ ժամանակի հետ: Լսողական-ժամանակային արվեստ է երաժշտությունը,որի ստեղծագործություններն ընկալվում են լսողութըան միջոցով: Կերպարվեստի տեսակները ընկալվում են միանգամից, տարածության մեջ՝ տեսողության միջոցով: Արվեստի մյուս տեսաակները՝ պարարվեստը, թատրոնը և կինոն, լինելով սինթետիկ տեսակներ, միաժամանակ թե' լսողական–ժամանակային են, թե' տեսողական–տարածական:

Ֆրանսիացի գրող և երաժիշտ Ռոմեն Ռոլանը գրել է. ‹‹Առանձին արվեստների սահմանները այնքան սահմանակ ու բացարձակ չեն , ինչպես կարծում են որոշ տեսաբաններ: Արվեստներից մեկն իր շարունակությունը ու ավարտն է գտնում մեկ այլ

արվեստում››: Արիստոտելը արվեստը դիտում էր որպես մայր բնության ընդօրինակում: Արվեստների փոխհարաբերությունների պարզաբանումը հնարավորություն է տալիս երաժշտության մեջ ‹‹տեսնելու›› գունային կերպարներ, նկարի մեջ ‹‹լսելու›› հնչյունային պատկերներ, պոեզիայում զգալու երաժշտական հնչերանգներ: Նման համալիր մոտեցումը ձևավորում է սովորողների ստեղծագործական միտքը և ճաշակը, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուրին՝ անկախ մասնագիտությունից:

Ըստ հույն փիլիսոփա Արիստոտելի՝ գրականությունը պատկերավոր կերպով արտացոլում է կյանքի դեպքերը և ապրումները, երաժշտությունն ընդօրինակում և արտահայտում է ապրումներ ու բարոյական որակներ, պարարվեստը պատկերում է կյանքը պլասիկ շարժումներով և հաղորդում մարդկանց բնավորություններ, հոգեկան վիճակներ ու գործողություններ:

Կերպարվեստն ընդօրինակում է առարկաները և արտացոլում իրենց բնորոշ եղանակներով և ձևերով: Արվեստի ստեղծագործությունները հասկանալու համար գրական տեքստը ‹‹միջնորդի›› դեր է կատարում: Սա երաժշտության մեջ պատկերներ տեսնելու մատչելի եղանակներից է:

Երաժշտությունը և գրականությունը

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն:

Դրանցից յուրաքանչյուրն ունի իր արտահայտչամիջոցները: Օրինակ՝ գրականության մեջ՝ խոսքը, ռիթմը, հնչերանգը, երաժշտության մեջ՝ ռիթմը, հնչյունների բարձրությունը, ելևէջները, պարարվեստում մարմնի նրբագեղ շարժումները, կերպարվեստում՝ գիծը, գույնը, թատրոնում և կինոյում՝ խոսքը, դերասանական խաղը և այլն: Արվեստի տեսակները միմյանց հետ փոխհարաբերվելով և իրար լռացնելով՝ դառնում են ավելի գրավիչ: Դրա վառ օրինակներից են թատրոնը, օպերան, բալետը և կինոն:

Առանց գրականության չեն լինի այնպիսի երաժշտական ժանրեր, ինչպիսիք են երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և երգչային այլ ստեղծագործություններ: Երեխաները գիտակցում են, որ երաժշտության և գրականության միասնությունից շահում է, ոչ միայն երաժշտությունը, այլ նաև գրականությունը: Երաժշտության ուղեկցությամբ գրական կերպարները դառնում են ավելի ցայտուն, ուժեղանում է մարդու վրա այդ կերպարների հուզական ներգործությունը: Սովորողները ուսուցման ընթացքում հասկանում են, որ խոսքն ունի երաժշտության պահանջ, իսկ երաժշտությունը՝ խոսքի: Պետք է հասնել նրան, որ աշակերտը երաժշտությունը ոչ միայն ականջներով լսի և հուզական արձագանք տա, այլ նաև ‹‹տեսնի աչքերով››: Եվ նույն կերպ՝ գրական ստեղծագործությունը ոչ միայն կարդա աչքերով ու մտքում տեսնի կերպարը, այլ նաև մտքում լսի այդ կերպարի ‹‹արթնացած›› երաժշտությունը: Այս ձևով սովորողներին հասկանալի է դառնում, թե առանց երաժշտության և գրականության որքան աղքատ կլիներ կյանքը:

Նկ.1



Երաժշտությունը և գրականությունը հնագույն ժամանակներից բարեկամացած, եկել հասել են մեր օրերը: Այսօր էլ արվեստի այդ տեսակները ներգործում են մարդկանց հոգևոր աշխարհի վրա: Այս արվեստի երկու տեսակները ունեն ընդհանրություններ, որոնց շնորհիվ

դարձել են ‹‹ազգակիցներ››: Երկուսն էլ կարող են արտահայտվել մարդու ձայնի միջոցով, ընդհանուր են նաև ռիթմն ու հնչերանգը: Այս արվեստի տեսակները միմյանց լրացնելով արտահայտում են բազմապիսի զգացմունքներ, մտքեր ու նկարագրում են մարդկային փոխհարաբերություններն ու բնության երևույթները: Երաժշտության ամենամատչելի ու տարածված տեսակներից է երգը: Առաջին անգամ երաժշտությանն առնչվում ենք երգի միջոցով:

Նկ.2

Բանաստեղծը միայն մարմին է տալիս իր մտքերին ու զգացմունքներին և կենդանի շունչ է տալիս բանաստեղծությանը, որ նա ապրի մշտապես, բայց որ նա թռչի, դրա համար թևեր են հարկավոր, իսկ թևեր առնել նա կարող է միմիայն էն կախարդական աշխարհում, որ կոչվում է երաժշտություն:

Հովհաննես Թումանյան

Երաժշտությունը և պարարվեստը

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն:

Երաժշտությունը և կերպարվեստը

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն:

Երաժշտություն, կինո և թատրոն

Արվեստի տեսակներից են գրականությունը, երաժշտությունը, պարարվեստը, կերպարվեստը, թատրոնը, կինոն և այլն:

Օգտագործված գրականություն և հղումներ:

1. https://hy.wikipedia.org/wiki/Սխվեատ

2.S. Vasquez, B.Barquero, M.Bosch, ,Teaching and learning combinatoriecs in secondary schoolե, Spain-2021